ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 46

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Գետազատ համայնքի 2018թվականի «Տեղական Տուրքերի և վճարների» դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Գետազատ համայնքի 2017թվականի բյուջեյի հոդվածներում տեղափոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ Կողմ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 47-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ „ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ„ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18, 19, 20 կետերի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնքի 2018թ.-ի Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի.

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ Կողմ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Գետազատ համայնքում 2018 թվականի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի, շինությունների համար՝ 15000դրամ,

բ/ սույն կետի ,,ա,, ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50 000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 դրամ,

գ/ ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քմ ընդհանուր մակերս ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.
- 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 դրամ:

2/Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 դրամ,

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի թույլտվության համար 5000 դրամ,

4/ Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար `

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 26000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 50000 դրամ:

բ/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շիանությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 15 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ,
-500-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ:

5/ Համայնքի տարածքում `

ա/ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,,Առևտրի և ծառայությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ, մեկ քառակուսի մետրի համար,

բ/ համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար 200 000 դրամ,

գ/ համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության

օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար 60 000 դրամ,

6/համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա/ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 4000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 7000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 11000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 16000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 21000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 31000 դրամ.

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 1000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 2000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 4000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 6000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 10000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 դրամ:

7/ Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրերում մանրածախ առուվաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ:

8/ Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/, խաղատներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120 000 դրամ:

9/ Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների յուրաքանչյուր ամիսը մեկ քառակուսի մետրի համար՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությամբ մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ, սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

9.1/ Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

9.2/ Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

10/Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնքի խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ:

11/ Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար 10000 դրամ:

2. Գետազատ համայնքում 2018 թվականի համար սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1/ Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 դրամ:

2/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահաջող, բոլոր շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների / այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10 000 դրամ:

3/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուման վճար՝ 10 000 դրամ:

4/ Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 1000 դրամ:

5/ Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 1000 դրամ:

6/ Գետազատ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ:

3. Սույն որոշման մեջ սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակիցը:

Աղբահանության վճարների դրույքաչափերի սահմանում

Գետազատ համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 20 դրամ:

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 30.72 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ – 20 դրամ),

2) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 30 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 83.3 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ. աղբ կամ 1 քմ - 30 դրամ),

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 8 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 312.5քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ. աղբ կամ 1 քմ - 8 դրամ):

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 4 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 625.0 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ - 4 դրամ):

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 48

ԳԵՏԱԶԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՈՒՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ 'Տեղական Ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Գետազատ համայնքի 2017թվականի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. „Գետազատի Մանկապարտեզ„ ՀՈԱԿ-ի ծնողական գումար պլանային թիվը պակասեցնել 898,0 հազար դրամի չափով

2. Ձեղչված գույքահարկի պլանային թիվը պակասեցնել՝ 281,273 հազար դրամի չափով, համապատասխանաբար պակասեցնել 2017թվականի բյուջեի ծախսային հոդվածներից՝ 1, 179,273 հազար դրամի չափով՝

ա/ Վարչական բյուջեի 01.01.01.51 գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/՝

4111- 115,650 հազար դրամ
4212- 240,0 հազար դրամ
4214- 35,429 հազար դրամ
4215- 8,0 հազար դրամ
4234- 10,0 հազար դրամ
4241- 42,152 հազար դրամ
4261- 56,0 հազար դրամ
4264- 250,925 հազա դրամ
4823- 40,625 հազար դրամ

բ/ Վարչական բյուջեի 08.02.04.51 գործառնական դասակարման /մշակութային միջոցառումների իրականացում/՝
4111- 156,063 հազար դրամ
4239- 30,0 հազար դրամ

գ/ Վարչական բյուջեի 08.01.01.51 գործառնական դասակարման /ոստիկանային միջոցառումների կազմակերպում/՝

4111- 81,429 հազար դրամ
4729- 50,0 հազար դրամ

դ/ Վարչական բյուջեի 01.06.01.60 գործառնական դասակարման /գույքի նկատմամբ իրավունքների գրանցում/՝

4819- 25,0 հազար դրամ
4823- 46,0 հազար դրամ

ե/ Վարչական բյուջեի 06.04.01.52 գործառնական դասակարման /արտաքին լուսավորության շահագործում/՝

4212- 30,0 հազար դրամ

զ/ Վարչական բյուջեի 07.06.02.55 գործառնական դասակարման /առողջապահություն ծրագրից/՝

4639- 100,0 հազար դրամ

է/ Վարչական բյուջեի 08.02.04.51 գործառնական դասակարման /սոց անապահով անձանց աջակցություն/՝

4726- 160,0 հազար դրամ:

3.Համապատասխանաբար ավելացնել՝

ա/ Վարչական բյուջեի 08.02.04.51 գործառնական դասակարման /սոց անապահով անձանց աջակցություն/՝

4729- 290,0 հազար դրամ

բ/ Վարչական բյուջեի 06.06.01.55 գործառնական դասակարման /ջրային կառույցների շահագործում/՝

4213- 8,0 հազար դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ Կողմ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ Կողմ

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԲԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**